



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

31. 71
9-28



25 NOV 2010

Բ63

10
891.71

9-28

ար

22 JUN 2007

ԱՎԵՏՈՂԱՐ ԶԱՐՈՂԻՔ

ՉՈՐՍ ՊԱՏԿԵՐ

Թարգ. ռուսելինից

Հյուսը Մայուս տաղմանուշ
թրցմա. Տարբաք բարձր
դիմում քեզ չպահպանում
է Շիքը 18e թ. թ. 1917r.

Տ. (Ռ. Շահով)

0.25 " 1 2 3

1163

170

ԳՐԱԴԱՐԱՆ

Ա-ՊԵՐԵԽ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1905.

ԱՐՄԵՆԻԱՆ ՇՐՋԱՎԵՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐԻԿ ԱՐՔԱԾԸ

Ես յաճախ էր տեսնում նորանց երբ նա անցնում էր շուկա-
լով: Գունատ, տանջահար գէմքով՝ նա միշտ իր հագին ուներ հին
ցնցոտիներ... զաւալի ու ծանր էր նորան նայելը: Երբէք նա չէր
խնդրում, շատ անգամ կանգնում էր առջեղ և անշարժ ու թախ-
ծոտ հայեացքով մեկնում էր գէպի քեղ իր ծեռքը: Եւ անկարելի
էր անցնել նորա մօտից ու ոչինչ չը տալ, ունենալով նոյնիսկ
ապառաժ սիրու:

Նորա անունը Միքայէլ էր:

Սակայն սկսեմ պատմւածքս:

Մի ցրտաշունչ ձմեռնային օր էր: Վշվշալով փչում էր յա-
մառ ու զիժ քամին, որ երկրի երեսից կիտելով թողի ահազին
ամպէր, բարձրացնում էր գէպի վեր և այնտեղից այդ թողը
ցրում-ցանում էր չորս կողմը:

Մի տեղ քամին պոկում-գցում էր տախտակներ, մի այլ տեղ
ցան ու ցիր էր տալիս եղէզնեալ կտուրը, մի երրորդ տեղ կո
տրատում լուսամտւաներս...

Հրապարակի վրայ համարեաւ մարդ-մադամ չը կար ու չէր
երեւում: Այստեղ եղող խայտարգիտ ամրոխը ճխտել-լցւել էր
խանութիւները, այնտեղ տաքանում, սուրճ էին վայելում և օրւայ
նորութիւնները իրար պատմում:

Իսկ խղճուկ Միքայէլ կծկւած՝ ահա կանգնել է փողոցի մի
անկիւնում, մի վաճառատան պատի տակ ու փչում է մատներին,
տաքացնելով նոցա իր չերմ շնչով:

Նա հաղած էր մի երկար խալաթ, որի անթիւ ծակ-ծկոտի-
սերից դուրս է ցցւած բամբակը, մանաւանդ թերի վրայ, և

շատ տեղ կարկատաններով պատաժ,—մի վարտիկ, որը ծնկների մօտ այն աստիճան մաշւած էր, որ նորա միջից երեսում էր մանկան մերկ մարմինը:

Ոտնամաններ բոլորովին չունէր: Նա ոտները փոխէփոխ վեր ու դիր էր անում, որ տաքանան:

Ահա նորա մօտից անցնում է հացավաճառ Սիմոնը, ուսի վրայ տանելով հացի տաշտր: Սիմոնը մերթ ընդ մերթ կանչում էր. այ լաւ թաղայ հաց...

Միրկօն անկիւնից առաջ վազելով՝ կանգնեց փողոցի մէտեղը, որպէսզի հացավաճառը նորան տեսնէ:

— Ի՞նչ բան ունես դու այստեղ կանգնած, այ ես քո էս... էն... դոռաց խեղճի վերայ Սիմոնը:

— կանգնած եմ.

— Դէ, օ, կանգնի՛ր, թէ ախորժակ ունես կանգնելու:

Եւ հացավաճառը անցաւ նորա մօտից:

Միրկօն զգաց տաք հացի հոտը և բերանը բաց մնաց:

Թէպէտ նա անասելի քաղցած էր, բայց չը վազեց Սիմոնի յետեից հաց մուրալու, այլ նորից գարձաւ դէպի անկիւնը ու կրրկին սկսեց փչելով տաքացնել մատները ու արագ ցատկուել մի ոտից միւսի վրա:

— Ի՞նչ ես անում այստեղ—հարցնում է նորան մի տղայ—մի ինչոր արհեստանոցի աշակերտ:

— Ոչի՞նչ:

— Ինչու չես գնում տաքանալու:

— Բայց ուր գնամ.

Եւ ապա տղան անցաւ, գնաց,

Մի քիչ յետոյ անց է կենում փաշալի պէս լաւ հագնւած մի աղայ մարդ: Նա առաջ է գնում հպարտ-հպարտ, և, ասես, հարցնում է ինքն իրան. «ի՞նչ ասես, չարժէ Մօստարը»:

Նա տեսաւ Միրկօն:

— Դու ում երեխան ես.

— Սերբ եմ—պատասխանեց Միրկօն ու նայեց նորա վրայ մի վշտահար հայեացքով:

— Իսկ անունդ ի՞նչպէս է.

— Միրկօ.

— Այստեղ ի՞նչ ես անում.

— Ոչի՞նչ.

Աղան խղճահարւեց: Գրպանից դուրս բերեց քսակն ու հանելով մի գրամ, մեկնեց.

— Ահա, առ քեզ, հաց գնի՛ր. աղալի տւածը արասի էր:

Միրկօի աչքերը փալլատակեցին, երբ նորա ձեռքը լանկարծ այլքան փող ընկաւ և նա ուրախութիւնից սկսեց թռվոալ:

Շնորհակալութիւն, գոչեց նա:

— Բայց դու զիտե՞ս, թէ նա ով էր—Միրկօին հարցրեց մի խանութպան, երբ աղմ'ն արդէն բաւական հեռացած էր:

— Զը զիտեմ:

— Դա այն Բաշիչն է, որը երեք Սերբերի սպանեց, ուղիղ եմ ասում:

Միրկօն շշմեց ու տեղն ու տեղը քարացած մնաց:

— Միթէ սա նա է:

— Նա է:

Միրկօն կանգնած՝ մտատանջւում էր, տատանւում: Նա մէկ նալում էր փողին, պինդ սեղմում ձեռքի մէշ, մեկ էլ վըրդովմունքից ալլալում: Յանկարծ աղքատիկը սկսեց թռչել, որպէս մըրիկ:

Ո՞ւր... հարցնում է խանութպանը:

Բայց Միրկօն յետ անգամ չը նայեց:

Նա վազում է բոլոր ուժով, առանց կանդ առնելու: Վազում է, ասես խելազար:

Ահա հասաւ աղալին:

— Աղա, կոչում է նա

— Ի՞նչ ես ուզում.

— Ահա քո արասին,

Աղան զարմացաւ.

— Միթէ չես ուզում,

— Զեմ ուզում:

— Բայց ինչու համար, թշւառ.

— Զեմ ուզում և ուրիշ ոչինչ:

Եւ ապա նա աբասին ձգեց աղալի առաջ ու յետ վազեց, նորից սկսեց փչել մատներին ու ցատկոտել ոտից ոտի վրայ:

ՍՈՒԻՐՀԱՆԴԱԿ

- ՀԷՇ, Սիմոն.
- Այստեղ եմ, Ստոեան.
- Պատրամստ ես դու, թէ չէ.
- Պատրաստ եմ.
- Այստեղ եկ:

Ստոեանը, փոքրիկ աւազակալին խմբի պլիսաւորը—հանեց ծոցից մի համակ և տւեց իր սուրհանդակին.

— Տար ալս Յովան Գորշտակին, որ Զալումումն է,—ասաց Ստոեանը,—բայց զգոյշ կաց, պահիր ալդ, ինչպէս աշքիդ լոյսը: Գորա մէջ ես գրում եմ թէ այսօր երեկոյեան դալու ենք նորա մօտ: Ինքդ հասկանում ես, թէ ի՞նչ կարող է մեզ սպասել, եթէ նամակը ուրիշի ծեռք ընկնի:

- Աւրիշ ոչինչ չունեմ հրամայելու, հարցը Եմոնը.
- Ել ասելու ոչինչ չունեմ. դէ՛հ, զնա

Եմոնը իսկոյն և եթ սե աղլուխը ձգեց ուսերին, որպէս սրբնթաց եղջերու, ժայռից ժայռ թռչելով ճարալ ընկաւ նոր հայդուկների սիրած խիտ անտառի միջով:

Սրդէն իննը տարի է, ինչ նա Ստոեանի հետ աւազակութիւն է անում: Նորա միմեանց սիրում են, ինչպէս եղբայր-եղբար: Մէկը միւսի համար իւր կեանքը անդամ չէր խնայում, ուր մնաց ուրիշ բան:

Եմոնը գեռ ջահել էր, մօտ քսան-եօթ տարեկան. սակայն այն աստիճան չափահատ էր երեսում, որ կարծես, եռեսուն տարեկանից էլ անց լինէր: Ինչպէս տառում են մեր զիւղացիները, նա բարձրահասակ էր ու շշմատ, որպէս սոնին, լոյնաթիկունը, որպէս ամրոցի պատր:

Հենց նայես նորա վրայ թէ չէ, թւում է, թէ դա այն

բաջասիրա հերոսներից է, որոնք կուեցին կոսեան գաշտում, Բողտան Յուգովիչի դրօշակի տակ:

Սիմոնը շտապ-շտապ զնում էր Զալում.—Այսօր երեկոյեան Գորշտակի մօտ ենք լինելու, իսկ վալդ դուցէ Կացկի մօտը լինիք: Թւում է, թէ ինչ որ մի բան է կատարւում: Գորշտակի լրտես է: Ճիշտ է, որ ինչոր բանի հոռ է առել:

Այսպէս էր մտածում Սիմոնը ինքն իրան և մտածում Գորշտակի մասին, բարձրանալով մի թիք բարձրութեան վրայ, որը հարկաւոր էր անցնել Զալում գնալու համար:

Սրդ բարձրութիւնը կտրատած էր անյատակ ճեղքերով ու անդունդներով և նեղիկ ձորերով: Այգօրինակ տեղերում կարող էր լինէին բնակւել լոկ այծէրը: Եւ Սիմոնը հարպիկութեամբ առաջ էր անցնում: Նա յոդնել չը գիտէր, ուստի կանգ չէր առնում հանգստանալու: Զարհուրեկի էր վերեից նայել այդ անդունդներին, մինչդեռ նա իսկի էլ չէր գարզանդում:

Մնում էր անցնել մի քանի քայլ և նա դուրս կը զար տափակ տեղ, իսկ նորանից դէն ճանապարհը հարթ էր և ուղիղ:

Յանկարծ նա իր առաջ աեսնում է մի քանի թուրքեր: Նորա թուրք աղաներն են, բէզեր, որոնք յանախ դալիս են այս կողմեր որս անելու: Տեսնելով հայդուկին, նորա բոլոր կանգնեցին պատրաստելով հրացանները.

— Կանգնի՛ր, զոռացին նոքա.

— Ճոնը նայեց նոցա և իսկոյն համեց իր Փոքրիկ զէնչալը.

— Ի՞նչ էք ուզում:

Աղաները ուզզեցին զէպի նա հրացանները.

— Ո՞ւր ես զնում ալդպէս.

— Դնում եմ իմ գործով.

Աղաներից մէկը ծիծաղեց.

— Կարծում ես, մենք քեզ չենք ճանաչում... բայց լիշտում ես, որ ես Ստոեանի մօտ զերի էի: Դու նորա օդնականն էիր... Դու նորա սուրհանդակն ես...

— Սուրհանդակներ—զարմացան միւսները.

— Այս. ճիշտ է, ի՞նչ էք կամենում, զուց Եմոնը:

— Այս մարդը նամակներ է միշտ տանում. հիմայ, հաւանական է, ոչնպէս նամակ է տանում:

Սիմոնը ոչ մի խօսք չարտասանեց: Նա միայն ձեռքով շօշափեց իր կուրծքը, որ տեսնէ, սալամաթ է ժողի նամակը, թէ չէ:

— Նամակը մեզ տուր, գոչեցին աղաները:

— Մօտս նամակ չը կալ—ասաց Սիմոնը

— Կայ.

— Զը կայ.

Նոցանցից մէկը ուզեց խորամանկութիւն բանեցնել.

— Թէ կայ, տուր և մի՛ վախենա. գիտես, որ մէնք մեր խօսք տէր մարդիկ ենք, մեր խօսքը խօսք է:

— Իմ մօտ նամակ չը կայ:

— Կայ, շարունակեց առաջին աղան,—տուր մեզ և մենք կը խնայենք քո կեանքը:

Սիմոնը մի փոքրը մտածեց, յեաոյ ձեռքը կրծքին դնելով գոչեց.

— Ձեմ տայ:

Աղաները իրար նայեցին:

Նամակատարին իսկոյն փամփշտահարել նոքա չէին ցանկանում, որովհետեւ հայդուկը կը զորւէր տնյատակ անդունդը, որի ժայրին կանգնած էր, և նամակը կը կորչէր, որը և պէտք էր նոցա: Իսկ Սիմոնին շրջապատել ու այդպէս բռնել չէին յանդնում, որովհետեւ նորանից վախենում էին:

Փորձեցին ստանալ խորամանկութեամբ.

— Նամակը տուր, ասացին, մեղնից փեշքեալ կը ստանաս:

— Ինձ փեշքեալ չի հարկաւոր:

— Լաւ մտս ծիր.

— Ես արդէն մտածել եմ: Ձեմ տայ:

Աղաները նորից իրար նայեցին:

— Պէտք է դորան բռնել, ասաց մէկը:

— Արդէ:

Եւ բոլորը դարձան հայդուկի վրայ: Սիմոնը բարձրացրեց դէնչալը և մի քիչ յետ քաշւեց:

— Ես իմ եղբայրներին չեմ դաւաճանի. ես աղնիւ Սերը եմ...

Այդ իսկ ըուպէին նա դէնչալը նետեց թուրքերին, իսկ ինքը զլորւեց դէպ անդունդը. Անդունդից լսուեց մի խուլ աղմուկ ու կոտրաւող միւզերի ճայթայթոցը...

— Ալլահ-իլ—Ալլահ—գոչեցին թուրքերը և իրար նայեցին: Ցետոյ ամեն ինչ լռեց:

ԸՆԴԱՌԱՋ

Արդէն մի բանի օր է, մայրը շարունակ միիթարում է իր փոքրիկ աղջիկներին:

— Ձեր եղբայրը կը գայ:

Նա հարեւաններից լսել է, որ բոլոր այն ձեր ու շահէները, որոնք ապստամբւել ու գնացել են կոփւ յանուն «Աղնիւ խաչի», այժմ վերադառնում են ու շուտով տանը կը լինին:

— Ձեր եղբայրը կը գայ!—ասում էր նա աղջիկներին և ինքը վաղօրօք անսովոր կերպով ուրախանում, որ շուտով կը տեսնէ իր սիրելի որդուն ու նորան կը սեղմէ իր մայրական կրծքին:

Հանար խոմ չէ: Երկու ամբողջ տարի է անցել, ինչ նա վի տեսնում իր անդին որդուն: Շատ է անցել այն օրից, երբ նրա որդին «մնաս բարեւ» ասելով թողեց և ուրիշների հետ միասին հեռացաւ մի ինչոր տեղ, իսկ ինքը թոյլ ու անզօր, մնաց մեն-մենակ ու սկսեց օր ու գիշեր տանշւել, աշխատելով կերակրել իրան ու իր երկու փոքրիկ գաւակներին:

Անչափ ծանը էր նորա դրութիւնը այդ ժամանակ: Նորան երբեմն այս ու այն հարեւաններն էին կարեկցօրէն կերտկուր հասցնում, բայց ամենից յաճախ էր պատահում, երբ նորա տանը հացի մի կտոր անդամ չեր գտնւում և նա քաղցում էր ամբողջ մի օր, երկու օր...

Իսկ երեխանները չէ որ շատ փոքր էին ու թոյլ: Մեծ աղջիկը ոչ աւելի քան տաս տարեկան էր, իսկ միւզեր դէպ տարեկան իսկ չկար. հարկաւ դոքա համբերութեամբ անկարող էին տանել քաղցը և մերթ ընդ մերթ հարցնում էին.

— Մայրիկ, ի՞նչու մեղ ուտելու բան չես տալիս:

— Հիմա ոչինչ չկայ.

— Բայց կը լինի:

— Կը լինի, անպայման կը լինի...

— Իսկ ե՞րբ.

— Հենց որ գայ ձեր եղբայրը, ասում էր նա սովորաբար:

Եւ թշւառ մայրը միանդամայն հաւատացած էր, որ այդ անօթութեանը վերջ կը դրւի, երբ վերադառնալ իր Յովոն ու սկսէ աշխատել: Սակայն մանուկները անզօր էին երկար սպասելու:

— Բայց Երբ պիտի գայ մեր եղբայրը.—հարցնում էին նոքա:

— Կը գայ, շուտով կը գայ... պատասխանում էր միշտ մայրը:

Եւ ահա հիմայ, վերջապէս, իրօք որ վերադառնում է նա միւս սպատամբների հետ միստին: Եւ կարճ էր մի այլ մարդ առաւել երշանիկ լինել, բան այդ խղճուկ մայրը և նորա անմեղիկները:

Ամբողջ իր խրճիթը նա կարգի բերեց, —թող որդիս ամեն ինչ կանոնաւորւած տեսնէ տան մեջ,—մտածում էր նա: Թարմ ու մանր խոտ բերեց և որդու համար անկողին պատրաստեց:

— Խե՞ղն բալաս, այնտեղ միշտ քարերի վրայ է քնելիս եղել, մրմնշում էր նա, թող հիմայ հանդստանայ փափուկ անկողին մեջ:

Հասաւ վերջապէս ցանկալի օրը:

Ողջ զիւղում տիրեց մի ժխոր, իրարանցում: Մեծ ու փոքր շտագում են զիւղի շրջակալրից հեռու գնալ զիմաւորել կույց վերադարձողներին: Խրճիթների առաջ կանգնած են կանաք և իրար հետ զրուցում են: Նոցա մօտից խումբ-խումբ մարդիկ են անցնում, և բոլորը ուրախ են, կայտառ, երգում են երգեր ու ժպտագէմ իրար երեսի նայում: Խսկ երեխաները խոնւել են զրօշակի նմանութիւն ունեցող մի ինչոր բանի շուրջը և աղմկում են, ծչում, պատրաստելով հերոսներին աղմկարար բնդունելութիւն ցոյց տալու:

Եկել էր և էն մայրը. նա բերել էր իւր հետ փոքրիկ աղմիկներին, իրանց սիրելի եղբօրը դիմաւորելու:

Խղճուկը կերպարանափոխւել էր միանդամայն. նորա դէմքը անհամեմատ պարզ էր և ուրախ, քայլածքը հանդիսա, իրանը

անդամ ուղղւել էր—այժմ նա բոլորովին նման չէ կծկւած ու կորացած պառաւի:

Եւ մանուկները ուրախ թաշկոտում են նորա շուրջը և կոչում:

— Մայրիկ, մեր եղբայրը որ գայ, էլ քաղցած չենք մնայ...

— Չենք մնայ, զաւակներս, չենք մնայ, ասում է մայրը և լինը էլ ժպտում:

— Եւ մենք հիմայ ամեն ինչ կունենանք.

— Ամեն ինչ, ամեն ինչ լի ու լի:

Սկզբիսի խօսակցութիւններով նորա հասան դիւղի ժայրը, գուրս եկան զիւղից և վերջապէս մօտեցան մացառութիւն:

— Այստեղ պիտի սպասենք, ասաց մայրը:

Սղիկները հնագանդեցին, կանդ առան:

— Զեր եղբօր համար պառւղներ հաւաքեցէք, ես զիտեմ, նա սիրում է պտուղի Եւ երկու փոքրիկ աղջիկները վազէվադ մտան մացառների մէջ, սկսեցին քրքրել քոլ ու թուփ ու պտուղ սրոներ: Խսկ մայրը նստեց մեծ կաղնու տակ և շարունակ նայում էր դէպ հեռուն, սպասելով, թէ էս ա, հա շուտով մեկը կերևայ հեռաւից:

Անցաւ մի փոքր և ոչ ոք չերևաց... անցան զարծեալ շատ րոպէներ, էլի ոչ ոք...

Բայց ահա յանկարծ հեռուում երևաց մի ամպի կտոր, որը քանի մօտենում, այնքան մեծանում էր: Այժմ նա կարողանում է զոկել, որ այդ ձիաւոր ու ոտաւոր մարդիկ են, մօտ քսան հոգի, և շտագում են դէպի զիւղը:

Նորա սիրտը սկսեց ուրախութիւնից բարախել, նա արագ ոտքի կանգնեց:

— Ահա նա, զոչեց, ահա՝ նա.

Եւ զառնալով դէպի անտաւոր, նա կանչեց աղջիկներին:

Սղիկները խսկոյն մօտ վազեցին.

— Ուր է նա, հարցնում են նորա:

— Ահա, ահա, տես՝ մէ էր նա ու ցոյց տալիս ծեռքով:

— Հա է, հա է՝ զոռացին մանուկները, ուրախութիւնից թովողալով:

Մինչ այդ վերադարձող ապատամբները բոլորովին մօտեցան: Նորա անցնում էին իրար գրկած ու երգում զանազան երգեր:

Մայրը գնաց նոցա դէմ:
 — Բարի լոյս—բարեռում են բոլորը նորան:
 — Բարի լոյս ու բարի աջողութիւն,—պատասխանում է
 նա և միաժամանակ աչքերով որոնում իր որդուն:
 Բայց նա այդտեղ, դոցա մէջ չկար:
 — Իսկ իմ Յովին ուր է, դառնում է նա անցնողներից վեշինին
 — Ուրեմն նա ք՞ո որդին է...
 — Այո՞
 — Զը գիտեմ, գուցէ յետ է մնացել, ահա մեր յետերց դա-
 լիս են, ասաց և առաջ անցաւ:
 — Ինչո՞ւ նա ուշացաւ, մըմնշաց ինքն իրան, միթէ չի իմա-
 նում, որ ես այստեղ սպառում եմ իրան...
 — Ո՞ւր է մէր ախալերը—հարցնում են մանուկները:
 — Կը գալ, կը գալ շուտով—պատասխանում է նա ու նո-
 րից նայում դեպի հեռուն:
 Եւ իրաւ, կրկին մի քանի մարդիկ, կուից եկողներ, մօտեցան:
 — Սրանց հետոն է, սրանց հետ, ասում է նա ու նորից
 եկողների դէմ գնում:
 — Դոքա բոլորը խեղճ պառաւի հարեաններն էին: Նա նա-
 յում է ամեն մեկին և չը սպասելով նոցա «բարի լոյսին»—շու-
 տով հարցնում է.
 — Իսկ ուր է իմ Յովին:
 — Հարեանները նայեցին միմեանց... երեսում էր, որ բոլորն
 էլ զժւարանում են պատասխանել:
 — Գալի՞ս է արդեօք նա, հարցրեց նորից:
 — Զը... չը գիտենք—ասում են:
 — Գալի՞ս է արդեօք նա ծեր յետերց—կրկնում է մայրը,
 կարծես չը լսեց նոցա տւած պատասխանը:
 — Մէր յետերց ոչ ոք չը կայ...—հազիւ-հազ, վերջապէս,
 արտասանեց պառաւի քեռորդի նիկոլը և, առանց նայելու նորա
 վրայ, շտափեց առաջ անցնել:
 Պառաւը նորից կանդ առաւ. մի ինչոք ծանր զգացմունք ճնշում
 էր նորա կուրծքը... նա չէր կարողանում շունչ քաշել:

— Զը կայ որդիս, արտասանում է վերջապէս նա դողդո-
 չոյն ձայնով և էլի շարունակ դէպ հեռուն նայում, սպասում...
 Այն կողմն են դարձել ու նայում ե' աղջիկները:
 Իսկ այնտեղ—հեռուում ոչ ոք չէր նշմարում, ոչ նամբորդ և
 ոչ ամպ. միայն մի քանի ագռաւներ, որոնք եկած էին, յայտնի չէ,
 որտեղից, պատւեցին պառաւի զիսավերեն ու թռան զնացին...
 հեռու, շատ հեռու...
 — Զըկայ չըկայ որդիս—մի անդամ ևս խուլ կերպով
 կրկնեց պառաւը, և գաղտնի նախազգացմունքից ցաւադին կերպով
 սեղմւեց, ճնշուեց նորա սիրտը... չերմ արտասուքը լցրեց նորա
 աչքերը և վագեց նորա կնճռուտ դէմքի վրայից:
 Իսկ աղջիկները այդ տեսնելով, զրկեցին իրանց մօրը ու սեղ-
 ւեցին նորան:
 — Լաց մի լինի, մայրիկ, կը գալ մէր ախալերը, լաց մի՛ լինի...

ՀԵՐՑԳՈՎԻՆՈՒՅԻՆ.

Յորոտեան գերեզմանատան մօտ պատահած կռւից երկու օր
 առաջ Սարդար Մարկօին ներկայացաւ մի ջահել հերցգովնացի.
 տեսքից նա շատ մատաղ էր երեւում, ոչ աւելի, քան տասնվեց
 տարեկան և միենոյն ժամանակ անսովոր գեղեցիկութեան տէր,
 ասես «զայտամով քաշած պատկեր», սպիտակ ու կարմիր երեսով,
 որպէս «թարմ ձիւնը արիւնով սրսկւած» և ու, ինչպէս ածուխ,
 աչերով: Երկար ու մթագոյն մազերը առջևից թափթփւած էին
 Ճակատի վերայ, զրեթէ մինչև աչերը, իսկ յետեկի կողմից նորա
 ցածանում—համնում էին ուսերին: Ամաչկոտ ու դրդորիկ էր նա:
 Մի կերպ մօտեցաւ նա Սարդարին ու համբուրեց նորա ծեռը:
 — Ո՞րտեղացի ես, պատանեակ, հարցնում է Սարդարը, իսկ
 ինքը չի կարողանում նորանից աչք թարթել.—այնքան էր պա-
 տանին նորան դրաւում:
 — Նեւեսինցի:
 — Ի՞նչ է ըս անունը:
 — Ստանկօ:

— Աւմոնցից ես.

— Խանկալիներից:

Սարդար Մարկոն նայեց իր բեխերին և երկու-երեք անգամ կօշիկի ըթով տոփից գետնին, ասես մի-ինչ բանի մասին մտածելով:

— Սակայն զու ինչո՞ւ ես եկած, հարցրեց նա բաւականի երկար լոռութիւնից յետոյ:

— Եկել եմ պատերազմ գնալու:

Սարդարը զլիսով արեց, կարծես ուղում էր ասել: «Ինց այդպէս էլ ես զիտեի՛»: և նորից ոտք գետնին խփեց:

— Բայց չէ որ զու գեռ շատ չահել ես, — ասաց նա առանձնապէս շեշտելով խօսքերը:

— Միթէ այդ կարող է արդիլը լինել: — Հարցրեց պատանին ու աչքերը կախ գցեց:

— Կարող է, շատ բանի կարող է արգելը լինել, — պատասխանեց Սարդարը — հիմայ զու կարծում ես, կուելը, արիւն թափելք հեշտ է, սակայն այդ այդպէս չէ, զու սխալում ես: Բոլոր գեռահաս պատանեակները, ինչպէս զու, չափազանց վախկոտ են: Երբ նոքա զնում են կոփ, թւում է, թէ նոցանից էլ աւելի քաջ ու կատաղի մարդ չի լինի, բայց հէնց որ սկսում է հրացանաձգութիւնը և նորա որոտը, նոքա խօսյն և եթ գունատում են, թաք կենում, փախչում:

— Ես այդ զիտիներից չեմ: — ասաց պատանին:

— Ինչպէս, ինչու պիտի զու նոցանից լաւ լինիս.

— Ես չեմ փախչի և էլ չիմ թաք կենալ, մեռնելու էլ լինեմ...

Ես չեմ վախենում հրացաններից... միայն թէ զու ինձ ընդունիր քո զօրքի մէջ, իսկ յետոյ կիմանաս:

Մարկոն կրկին խորասուզւեց մտքերի մէջ. և ապա զլուխը բարձրացրեց և ուզեց նորից պատանու աչքերին:

— Դէ՞հ լաւ... կրնդունեմ քեզ... բայց, իրաւ, ես պատրաստ եմ զրազ զալու, որ զու առաջինը կը փախչես կուի դաշտից... ես ծեզ ճանաչում եմ, լաւ եմ ճանաչում... բայց թող լինի այնպէս, ինչպէս զու կամենում ես: Այժմ զու մերն ես, զնա դէպի զօրքը... վնաս չը կալ, ամուռամենախիւ մեր թիւը մէկով կաւելանալ:

Պատանին կրկին մօտեցաւ Սարդարին, համբուրեց նորա ծեռ-

ըր, իսկ նա շոյեց պատանու զլուխը և հազիւ լսելի ձախոկ ասաց: «Ողջ լինես». իսաոյ նորան յանձնեց ընկերներին, որոնք ընդունեցին, իբրև իրենց եղբօրք: Այդպէս են սովորաբար հերցօգինեացիները:

Բորոտեան զերեզմանատան մօտի ահեղ կուից յետոյ ամբողջ զօրքը հաւաքւեց Սարդարի շուրջը: Ստուգում էին, համարում, որ իմացւի, բոլորը արդեօք ներկաց են գտնուում, բոլորը սազ-սալամաթ են: Սարդարը կանգնած էր մէշտեղը, ամեն մէկից հարցնում, աեղեկութիւններ էր հաւաքում, իսկ զօրքի անդամները այդ միջոցին խօսում էին միմեանց հետ ու իրար ձայն տալիս:

Մօտեցաւ էլի մի զինուր պատանի:

— Իսկ ուր է մեր Ստանկօն — հարցրեց նա

Բոլորը լսեցին, իրար նայեցին, սկսեցին չորս կողմը դիտել, բայց Ստանկօն չէր երեւում:

— Նա այստեղ չէ...

Սարդարը զարմացաւ, նա մի տեսակ չէր կարող հաւտտալ, թէ Ստանկօն չը կայ... փախուստի մասին խօսք անդան չէր կարող լինել, որովհետեւ Սարդարը իր սեփական աչքովն էր տեսել, ինչպէս էր Ստանկօն կուում, որպէս ներսու, փորձւած ատար պատերազմների մէջ... իսկ նորա մահւան մասին նա չէր կամենում, կամ աւելի ճիշտ, վախենում էր, չէր յանդգնում մտածել անդամ. երկու օրւայ մէջ նա այն աստիճանն էր սիրել Ստանկօն, որ կարծես նա նորա ազգականը լինէր, կամ հարազատ որդին... ի՞նչ է նորան պատահել. նա մի խուլ ու անսովոր ծ յնով հարցրեց իրան շրջապատող զինուրներին:

— Զենք իմանում. — պատասխանեցին նորան:

— Գտէք շուտով նորան, — զուաց նա: — Գտէք այս բոպէիս նորան կենդանի կամ մեռած: Ով զիտէ՞՝ զուցէ մի տեղ յետ է ընկել, ուշացել է: Որոնցէ՞ք...

Եւ զինուրները, հնազանդելով Սարդարի հրամանին, ցրւեցին ամեն կողմ փնարելու: Մի զիտէից միւսի մօտ էին գնում, նայում էին արդեօք Ստանկօն սպանւածների մէջ չի երեւում... Արոնում էին նորան թփերի, բոլերի մէջ, բայց այդ ամենը զուր անցաւ.

Այդ միջոցին մի քանիսը զինւորներից գնացել էին չուր բերելու. նոքա գտան Ստանկօին առւակի ափին: Նա ընկած էր փորի վրայ, իսկ նորա տակ արիւնի մի տմբողջ լճակ էր գոյացել, որը արդէն թանձրացել ու սեխն էր տալիս... իսկոյն մօտ վազեցին և շակեցին նորան մէջքի վրայ: Նա գունատ էր, որպէս քաթան, փակ աչքերով և բաց բերանով: Մազերը խճճել էին, թափթակւել արիւնաներկ կանաչների վրայ, իսկ նոցա վրայ մակարդած էր արիւնը:

— Մեռած է,—ասաց մէկը, շօշափելով Ստանկօին:

Մօտեցան միւսները և սկսեցին դիտել.

— Զէ, չէ, չնչում է, Մստած վկայ, չնչում,—կոչեց առաջնը. բաւական էին այդ խօսքերը... միւսները վազեցին դէպի առուն, չուր բերեցին ու սկսեցին լւանալ նորա երեսը: Քիչ յետոյ Ստանկօի այտերի վրայ նորից երեաց քնքոյշ վարդագոյն կարմիրը... Տղերքը աւելի մեծ եռանդով գործի մտան: Սկսեցին նորան փայփայել, շոյել... և նա, վերշապէս, կտմաց-կամաց բացեց աչքերը... սկզբում նա չէր գիտակցում, թէ որտեղ է ինքը գտրնում, ի՞նչպէս է ալդտէղ եկել, ի՞նչ է իրան պատահել... քիչ յետոյ նորից աչքերը փակեց... յետոյ բացեց և թոյլ ձայնով մրմնչաց.

— Ջուր...

— Իսկոյն, գոչեցին տղերը և նորան մի քիչ չուր տւին, յետոյ զգուշութեամբ վերցրին նորան—Սարդարի մօտ տարան:

Սարդարը տեսնելով Ստանկօին, ուրախութիւնից աղաղակել սկսեց, բայց իսկոյն և եթ յօնքերը կիտեց. Վերը վտանգաւոր թւաց նրան:

— Տարէք դորան խրճիթ, իսկ ես բժիշկ կուղարկեմ այնտեղ:

Տղերքը կատարեցին հրամանը. վիրաւորւածին տարան ամենամօտ առունը:

Երբ բժիշկ եկաւ, Ստանկօն արդէն ուշքի էր եկել: Նա պարկած էր հանդիսու և ոչ հեծեծում, ոչ անքում էր, ինչպէս անում են շահել վիրաւորւածները:

Բժիշկ իսկոյն մօտեցաւ նորան, ուզեց նորա կրծքի վրայի կոնակները արձակել, որպէսզի տեսնէ կրծքի վերքը: Մակայն Ստանկօն թոյլ չը տւեց կրծքին մեռք տալ. նա վճռապէս հակառակւեց

այդ բանին: Սկզբում բժիշկը խնդրում, համոզում էր, բայց յետոյ, տեսնելով, որ խնդրելը զուր է, բռնեց ու բռնի կերպով արձակեց կրծքի կոճակները:

Եւ յանկարծ նա տեսաւ սպիտակ, որպէս ծիւն, ըստինքներ... բժիշկը բարացած մնաց զարմանքից, իսկ Ստանկօն ամբողջովին վառւեց-կարմրեց... նա ամօթխածութեամբ զուրի մի կողմ թեքեց.

— Դու... կի՞ն ես...—շնչաց բժիշկը, ապշած դրութեան մէջ...

— Այո՛,—լուեց կամացուկ մի պատասխան:

— Մարդու գնացած...

— Ազար աղջիկ եմ:

— Իսկ անունդ ի՞նչ է...

— Ստանա:

— Բժիշկը նայեց, վերը լւաց, փաթաթեց, իսկ յետոյ նրատելով Ստանայի դէմ ու դէմ, սկսեց զարմանքով դիտել նորան: Իսկ Ստանան չէր վստահանում աչքերը վերև բարձրացնել և բոյր ժամանակ նայում էր մի այլ կողմ:

Վերջապէս բժիշկը ծանձրացաւ այդպիսի լոռութիւնից. (առհասարակ նա երբէք լուել չը գիտեր), և սկսեց աստիճանաբար հարց ու փորձ անել:

— Ի՞նչու զու եկար պատերազմ:

— Այնպիս...—

— Չի կարող լինել, որ «այնպէս»—ապա իրչու ուրիշ կանայք «այնպէս» չեն անում. Այստեղ բան կայ... գուցէ զու մէկի նշանաձն ես, ուստի պատերազմ ես դուրս եկել ամուսնուդ հետ միասին...
— Ո:

Բժիշկը այն մարդկանց կարգին էր պատկանում, որոնք այդօրինակ թռուցիկ պատասխաններով բաւարարութիւն չեն կարող ստանալ: Նա ուզում էր ամեն ինչ սկզբից մինչեւ վերջ իմանալը որովհետեւ տեսնում էր, որ այստեղ թագնւած է մի ինչոր առանձին «հանգամանք», ինչպէս նա ասում էր այդպիսի դէպքում: Այժմ նա ոչ մի կերպ չէր կարողանում իր հետաքրքրութիւնը խեղդել և աւելի ու աւելի հարցուփորձ էր անում աղջկան, համոզում էր, որ նա խոստովանէ ամեն ինչ իր առաջ, երդուում էր եր-

կնքով, որ ոչ ոք այդ մասին չի իմանալ, թէև ինքն էլ համոզւած էր, որ իր այդ խօստումը չի կարողանալու կատարել:

Վերջապէս Ստունան հաւատաց նորան ու կամտցուկ սկսեց պատմել:

— Մեր գիւղում մօտ եռեսուն տուն կայ, և ամեն մի տանից երկու-երեք մարդ կոխւ գուրս եկաւ թուրքերի գէմ: Խոկ այն տունը, որից ոչ ոք չնում կոխւ, մեզանում Աստուծուց անիծւած է համարւում: Դիւղացիները ասում են, որ այդպիսի տան մէջ ապրողները «Բրանկովիչի *» ցեղից» են:

Այդ բանը պատահեց նաև մեր տանը. Ես մի եղբայր ունիմ, ինձնից մի փոքր մեծ, նա քսան տարեկան է, բայց Աստուծ գիտէ, ինչո՞ւ, սասափի վախիստ է և նապաստակի նման երկչոտ: Նա Ռուի մասին մտածել անդամ վախնում է, ուր մնաց, թէ կուէ, կոխւ գնալու... Նորան յորդորում էր մայրս, յորդորում էի նաև ես, որ նա իր ընկերներից չետ չը մնայ, բայց նա մեղ լսել անդամ չէր ուզում:

— Զեմ ուզում, ասում էր, արիւն թափել... Այնտեղ առանց ինձ էլ եօլայ կերթան... Ես չեմ ուզում սպանել ոչ ոքի:

Եւ այդ էր կրկնում ամեն անդամին:

Սկզբում մենք աշխատում էինք համոզել, բայց յետոյ այդ բանից ձեռք քաշեցինք: Այնինչ գիւղում մեր տան մասին սկսեցին պտտւել վատ-վատ լուրեր: Ոմանք այս, ոմանք այն... բայց բոլորն էլ մեր վատն են ասում...

— Մի առաւօտ ես դաշտ գնացի աշխատելու. իմ յետեից եկան ու ինձ հասան երեք, չորս աղջիկ: Ես բարեեցի նոցա: «բարի լոյս»: իսկ նոքա մինչեւ անդամ երես չը պարձրին դէպի ինձ...

— Ի՞նչ է պատահել ձեզ հարցրեցի:

— Ոչինչ... Զենք ուզում քեզ հետ խօսել: Դու Բրանկովիչի ցեղիցն» ես, քո եղբայրը միւս երիտասարդների հետ կոխւ չը գնաց:

Աչքերս սկսեցին մթագնել: Ինձ թւաց, թէ եռման շուր ածեցին վերաս, և քիչ մնաց, ուշաթափւելի: Սկզբում ես չէի իմա-

նում, ինչ անել... Եւ երբ նոքա մի փոքր հեռացան, ես վայր նետեցի գերանդին, որը հետո էի տանում և վազէվազ տուն եկալ... Ես փակւեցի իմ սենեակում և այնտեղ մենակ սկսեցի լալ ու հառաչել... Երկար-երկար ես լաց եղալ, ինքս չգիտեմ ճիշար, թէ որդան, բայց դորանից յետոյ ես ինձ մի փոքր թեթև, լաւ էի ըդքում... Ոտքի ելալ և մտածեցի, թէ ի՞նչ պիտի անեմ:

Աշխար հանար բան չէ, որ այդպէս անւանարկում, գցում են մեր տան պատիւր... մեզ այս-այն անվայել անուններ են կպցնում... Մեր ամբողջ ցեղում «Բրանկովիչներ» չեն եղել. իսկ այժմ յանկարծ մեզ այդ վատ անունն են տալիս... //

Այդ մոալլ մաքերը իրանց սրտմաշնուկ զօրութեամբ կրկին ծանրացան վերաս, և ես գարծեալ ինձ անչափ վատ զգացի, այնպէս որ արցունքը ակամայ սկսեց թափւեց իմ աչքերից:

Երկար չը մտածելով, ևս աեղիցս վեր թռալ ու ինքս ինձ ասացի. «Կերթամ պատերազմ...» Զեմ ուզում, որ մեր տան մասացի. «Կերթամ պատերազմ...» Կերթամ... մեռնելու էլ լինեմ»: Հէնց նոյն այդ օրը ես հագալ եղբօրս պահեստի շորերը և երեկոյեան դէմ, երբ սկսեց մթնանալ, ճանապարհ ընկալ, եկայ այստեղի:

Ահա քեզ իմ պատմութիւնը: Դու այժմ գիտես ամեն ինչ»: Նկատելի էր, որ այդ պատմութիւնը յոզնեցրեց, թուլացրեց Ստանալին, որի ծախնը կամաց-կամաց նւազում էր, ուստի նորա վերշին խօսքերը նոյնիսկ հաղիւ լսելի էին դառնում: Բժիշկը, որ զարմանքից բաց էր արել բերանը, ոչ միայն ուշի-ուշով լսում էր հերոսունու խօսքերը, այլ կարծես կուլ էր տալիս նոցա:

*.) Բրանկովիչ—անիծւած մի ցեղ.

ամ զբար ու մասնաւով զգուի մե ապօռ զգը ու արձան չկը չկատ
արած մաս բախքար և նախաւ ոմ ուու զյա միջամադր զրձա
ուու ու բայ կամաք բամաք և նախաւու ու զրձամուք ու
զը մի պաշտ նախաք ոչամ զար ու զայց-պայց այլ յայտ
ոյ ոմ ու մեջեա զգուի մե նայ ու յամաք պայտ անց

Աման հայք չու մի պայման և բայ զգուի անոր

Յ նայք և ափաման ամարք զու ու մայ զաման զու մ

ան անորք և զաման յախքան մաս-ուր թե այլ վայում մաս զան
եղամիւն ներ բայ վար մէ զամախքան նարք զրցան զու

անորք մէ մանա տոյ բայ թե ման

անորք զեման տոյ քայց զրձան պան բա

ան պայք տոյ մաս-ուր նայ բաման ու մ անորք մական

զիկցան նու ըմանան ըման բաման զգուոյք զու ամր
նու ոգու ու բան զի պայք ու քայց զաման զու զաման

ան մաս զան զու նայք ու նու անորք նախադ պայ

նու ու անորք ու նախադ անորք զաման զու պայ ու զան

բայ զաման պայք բաման զու ամր մական

անորք ման պայք նու զաման տոյ պայք նու պայ

պայք ու նու պայք զաման պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք

պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք ու պայք



ՀՀ Ազգային գրադարան

NL0316475

12.596